ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2012թվականի N 384-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԹԻՎ 301-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. օգոստոսի 3-ի «Դիլիջանի Կալինինի փողոցի 1-ին նրբ. թիվ 36 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին» թիվ 301-Ա որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. օգոստոսի 3-ի «Դիլիջանի Կալինինի փողոցի 1-ին նրբ. թիվ 36 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին» թիվ 301-Ա որոշման մեջ լրացնել. «Կալինինի փողոցի 1-ին նրբ. թիվ 36 հասցեի տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառույցները և օժանդակ շինության շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թ. մայիս ամիսը, առանց քաղաքաշինական նորմերի էական խախտումների, վերջինս համարել օրինական Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն» :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 04
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2012թվականի N 385-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12/15 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, գրանցված Դիլիջանի նոտարական գրասենյակի 20.08.2012թ. թիվ 1424 սեղանամատյանում, Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցում գտնվող ավտոտնակի ժառանգ է հանդիսանում քաղ. Կորյուն Խորենի Վարդանյանը: Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Կորյուն Վարդանյանը՝ Դիլիջանի Գետափնյա փողոցում գտնվող, իր սեփականությունը հանդիսացող ավտոտնակի սպասարկման հողամասի հողհատկացման հիմքերի վերականգնման և նույն հողամասը իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն, նշված ավտոտնակի սպասարկման հողամասի փաստացի չափը կազմել է 26.7քմ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում: Նշված հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին վերականգնել վերոհիշյալ ավտոտնակի սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը և նույն հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Կորյուն Վարդանյանին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 209 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, 66 և 87 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Կորյուն Վարդանյանին պատկանող ավտոտնակին տրամադրել նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 12/15 :
2. Վերականգնել Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 12/15 հասցեի ավտոտնակի 26.7քմ սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը և նույն հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Կորյուն Վարդանյանին: Օտարվող հողամասի արժեքը կազմում է 51104 դրամ:
3. Քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
4. Պարտավորեցնել քաղ. Կորյուն Վարդանյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողի արժեքը՝ 51104 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 04
ք.Դիլիջան